

Յետոյ կայ պատմութիւնը պարագանե-
րուն՝ որոնց համար Զուգայեցի վարդա-
պետը իտալիա եկաւ իր մեծաւորներու
յանձնարարութեամբ՝ Լիվոռնոյի մէջ, ուր
այդ ժամանակ ծաղկած զիրքի մէջ էր
հայ գաղութը՝ հայ տառերով տպարան
մը հիմնելու։ Ասիկա կարեւոր, յատկա-
նշական և պայծառ վաւերացում մ'է զոր
հաճելի է մեզ հոս մէջ բերել ամբողջապէս։

Առ կրքանիկ Տէրն իմ, Տէր Խաչատուր
Բարոնեայ Պետկ։

Ի Նոստատ Յովհաննիսէ Զոհրացոյ,
Բաւի Սպասաւորէ։

Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ Զօրդ
իմոյ մեծի և երջանկագոյնի. և Նախահաճութեամբ
Տեառն որ ի թվ. 18 և Բ. բաժանեալ ի սբ.
ուխտէդ, գիմեցի յարեւմտոս սակս լրութեան,
տպագրութեան. և ի սպառուածս ամի միոյ,
որ ընդ ծով և ընդ ցամաք՝ հասի յիտալիայ ի
գեղազարդ քաղաքն ի Վենետիկ և վերահասու-
եղեալ գործառնութեանցս, ընթացայ ի Հռոմ.
և անդ սկիզբն արարի նորագոյն գրոց և տը-
պոց. և աւարտեալ մասն ինչ ի գործոցս՝ առի
զարհետաւորս և գիմեցի ի Լիվոռնայ. և անդ
զտեղի կալեալ մեծաւ ջանիւ և բարի գիտա-
ւորութեամբ, տիւ և գիշեր անդադար աշ-
խատելով՝ լրումն տուաք տպագրութեանս. յեր-
կարելով յաշխատութիւնս՝ բաց ի ճանապարհ-
հէն. Գ. ամ և Զ. ամիս. անմխիթար յամենայն
կողմանց։ Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ,
և աղօթիւք տեսնող իմոյ՝ աւարտեցաք զտպա-
գրութիւնս անթերի և անպակաս կատարելու-
թեամբ. որք են տիպք զանազանք՝ ըստ զանա-
զան քանակութեան և որակութեան, մեծք և
փոքրք՝ ութիւք որոշեալք. ընդ որոց է և նիւթ
երգոց և շարականաց. և այլ գործիք բազումք՝
զարգարիչք տպագրութեանս. որով ամենայն ինչ
կարելի է տպել. յորոց իբր միջին կերպ է այս,
զոր տեսանէ տէրդ իմ ի ներկայս. զոր իբրեւ
զպտուղ հնազանդութեան մատուցանեմ ընդ իմոյ
զերախայրի գործոցս. որով կարիցէ տէրդ իմ՝

1. Վերելի ամբողջ նամակը գրինք բնագրին համե-
մատ։ Զօղածագիրը լաւ թարգմանաւոր մը չու-
նենալով շատ բան թողած, փոխած ու երբեմն ալ սխա-
լած է, մասնաւորապէս վերջին թուականի մասին, զինքով
զայն 1091, Մայիս 3, փոխանակ զնկու 1093 (1094)
Մայիս 6 (10)։ Ասոր մասին ալ յետոյ։

Ճանաչել զկատարելութիւն գործոցս՝ և զհաւա-
տարմութիւն ծառայի քոյ. զի ոչ կորուսաք
զժամանակն մեր ունայնաբար. որպէս կարծեն
այլք։ Իսկ վասն պակասութեանցն ներեա եր-
կայնամտութեամբ. զի իբրեւ զփորձ տպեցաք
զսա յոյժ ըշտապմամբ, վասն անմխիթար նե-
ղութեանցս. զի յաւուրս 2 աւարտեցաք զսա
11 և 10 հատ թուով ի միասին. միայն և առանց
ուրուք ձեռնտուութեան։ Վասն որոյ ընդունելի
լիցին տեսնող իմոյ, վաստակ ծառայի քոյ. իբրեւ
զնուէր անձնանուէր։ Վասնզի մտեալ որպէս ի
պատերազմ, իբրեւ արեամբ ստացայ զսա։
Ողջ լեր։

Ի Լիվոռնայ. ի թվ. 1094 Մայիս 6. 1

Գրքին վերջը զարդ մը կը գտնուի առ-
ջեւինին նման, սա վերտառութեամբ.

Շնորհօք ամենազօրին Աստուծոյ՝ արտկայա-
ցաւ Տիպք տպագրութեանս. Զեաւմբ Յով-
հանէս Վարդապետի Զուգացոյ. ի թվ. 1094.
Ի Մայիսի ամսոյ ի 6. 2

Պէտք է կարծել որ սա իտալիոյ մէջ
հիմնուած Հայկական Առաջին տպարանն
է։ Արդէն 1512էն ի վեր Վենետիկոյ մէջ
հայ տառերով կը տպագրուէին՝ շնորհիւ
երկու իտալացիներու՝ Անտոն Ծարոթոյ և
Ի. Ծանանդրէա Ազուանոյ, որոնք ճիշտ
այդ տարին էր որ հրատարակեցին «Պար-
զատումար»¹ անուամբ գիրք մը։ Այս
յարգի հատորէն ունին Վիեննայի պետա-
կան գրատունը և Երուսաղէմի Ս. Յակո-
բեանց գրատունը։ Տպագրութիւնը ութա-
ձալ է, էջերը — 58 — այբուբենական տա-
ռերով նշանակուած են։ Տպագրութիւնը,
մէկ ձեւ գրով է, որ ենթադրել կու տայ
իր նախնական ձեւին ալ համեմատ՝ թէ
ստուգիւ անիկա է իտալիոյ մէջ հայկա-
կան տպագրութեան առաջին օրինակը։

Եթէ գրերու ձեւ ըսելով հասկցուի մայ-
րերու փոքրագրութիւնը յետոյ զանոնք
ձուլելու համար, Զուգայեցի քահանային

2. Հոս ալ անկատար էր վերտառութեան թարգմա-
նութիւնը և առանց թուական յիշելու. որինք բնագրինը։
3. Զօղածագիրը Պարզատումարին իբր համապա-
տասխան զրած է իտալերէն «Questo è il Calendario
degli Armeni» (= Այս է Հայոց Տօնացոյցը)։

և իր արուեստաւորներուն գործը իսկապէս
մեծ եղաւ, նկատի առնելով ժամանակին
միջոցները։ Փորագրել մայրերը ութը ձեւ
գրերու՝ զանազան մեծութեամբ, 38 գրերու
այբուբենով՝ որքան որ ունի հայ լեզուն,
գլխազիր, փոքրագիր և շեղագիր, կատա-
րելապէս կ'արդարացնէ «գոթաւորութիւն-
ները» որոնց մասին նա կը խօսի։

Համեմատ մեր ունեցած փաստերուն,
այս ձեւերէնց և գիտնական քահանան
կանխագոյն է քան Վալսիզին և ուրիշներ
Լիվոռնոյի մէջ տպագրական արուեստով,
սակայն, հակառակ մեր խնամոտ պըպը-
տութիւններուն, ուրիշ տպագրութիւն չգտանք։

Եւ քանի որ մեր քաղաքին մէջ եղած
հայ տպագրութեան մասին խօսեցանք,
անօգուտ պիտի չըլլան այս առթիւ ուրիշ
տեղեկութիւններ այդ մասին։

Մինչեւ 1670, որքան որ մեզի յայտ-
նի է, լեցին Լիվոռնոյի հայ մամուլները.
և ճիշտ այդ տարին է որ հովանաւորու-
թեան տակ Ոսկան քահանայի՝ որ համ-
բաւաւոր հայ տպագրիչ մըն է, օգնու-
թեամբ իր Աւետիս եղբոր և ուրիշ քա-
հանաներու, տպագրուեցաւ հայերէն
թարգմանութիւնը Պեղարմինոսի քրիստո-
նէականի՝ ըստ Արեւմտեան Եկեղեցոյ վար-
դապետարեան և Պարտեզ հոգևոր-ը։

1. Զօղածագիրը՝ հակառակ էր «վերք» ըսածին,
խառնիխառն զրած է սկիզբի և վերջի ծանօթութիւն-
ները միանգամայն, թէև ան ալ անկատար՝ հայ թարգ-
մանի մը պակասէ։

Գրքին առաջին ճակատը հետեւեալն է. «ՎԱՐԴԱՊԵ-
ՏՈՒԹԻՒՆ քրիստոնէական, Գերագնացագոյնեղի Կարտի-
նայի Տեառն Ռոմայէրոսի Պեղարմինոսի թարգմանե-
ցեալ ի Բարսէ Վարդապետ Կոստանդինոպոլսեցոյ,
ի լեզու Իտալական և հայկական թարգմա. Յամի Տեառն.
1669 Հոկտեմբերի երեսուն, Յայկոնու»։

Իսկ Բ. ճակատն է «Տպեցաւ Տառս Աստուածային
Յամի, որ ի ծննդեմ Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, Հազար եւ Վեցմարիչ եւ Եօթանասուն, ի բռա-
կանութեան Հայոց Հազարի, Հարիչի, եւ Տասն եւ ընկի
Յայկոնուայ։ Ի փառս մեծագոյնս Աստուծոյ»։

Վերջին էջի կէսին (էջ 362) ասպէս. «Ներ Տպա-
րանումս սրբոյ Էջմիածնի Հաճութեամբ Տեառն Ոսկանի
Արքեպիսկոպոսի Հայոց։ Արքագրութեամբ Կարապետի
Վարդապետի Անդրիանացոյ։ In Livorno, Con Li-

Այս երկու գրքերը, իրենց գեղեցկա-
գիտական կազմութեամբ ալ, բոլորովին
տարբեր են Արեւելքի մէջ իրենց նմանա-
կից տպագրութիւններէն, և զանոնք զի-
տեղով գիւրաւ կ'անգրադառնան որ ա-
նոնք հայ կաթողիկէ քահանայի մը գործն
են, ուսած և կըթուած Սրեմուտքի մէջ։
Քրիստոնէականին վերջը՝ կը կարդանք.

«Այս աստուածային գիրքը տպեցաւ Լի-
ւոռնայ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպա-
րանին մէջ Յիսուսի Քրիստոսի 1670 բռա-
կանին, Աստուծոյ մեծագոյն փառաց համար,
հաւանութեամբ Գերպ. Ոսկանի՝ Հայոց Ար-
քեպիսկոպոսի, սրբագրութեամբ Անդրիանացի
Կարապետ քահանայէն»։

Տպագրութիւնը կատարեալ է, թուղթը՝
ընտիր. յստակօրէն տպուած են բազմա-
թիւ փայտափորագրութիւնները և արժէ-
քաւոր գործին միւս զարդերը։

Երկրորդ գիրքը առաջինին հետ նոյն
յատկանիշերն ունի և վերնագիրն է. Պար-
տեզ հոգևոր, տպուած Լիվոռնայ, Յամի
Տեառն 1670 տպարանին մէջ Ս. Էջմիածնի
Ս. Սարգսի՝ զօրական Լիվոռնայի մէջ, հրա-
մանաւ մեծաւորաց։

Ուրիշ տեղեկութիւններ չունինք, աւելի
քան 20 տարիներու շրջանին՝ Լիվոռնոյի
մէջ հայկական տպագրութեամբ հրատարա-
կութեանց։

cenza de' Superiori» (= հրամանաւ մեծաւորաց)։
2. Բուն ճակատը՝ նախ խաղերէն է սա երկու բա-
ռերով. Giardinetto spirituale (Պարտիզակ հոգևոր),
յաջորդ էջը հայերէն՝ ասպէս է. «ՊԱՐՏԵԶ ՀՈԳԵՒՈՐ։ Պարտե-
զական բազմաց եւ զանազանից թերմեանդականաց աղօթից.

Ըստ պատշաճաւորութեան տեղոյ եւ ժամանակի։
Թարգմանեցեալ ի Յօաննիսէ Վարդապետ Կոստան-
դինոպոլսեցոյ։

Յամի Տեառն 1670. (1670)։ Սեպտեմբերի Բ. Լիվոռնայի
Եւ տպեցեալ ի Տպարանի Սրբոյ Էջմիածնի եւ սրբոյ

Սարգսի զօրավարի
In Livorno. con licenza dei Superiori. Հետե-
ւեալը վերջին էջինն է (162) կէսէն վար, որ կը վերջա-
նայ խորհրդաւոր 5 գլխազերիով. Աւարտեցաւ գրքիկս,
որ կոչի պարտեզ հոգևոր. ի բռնոյն հայոց. Ռձի։

Հաւանութեամբ Տեառն Ոսկանի Արքեպիսկոպոսի Ե-
րեւմեցոյ։ եւ Արքագրութեամբ Կարապետի Վրդպի-
անդրիանացոյ։

Ն Գ ԵԱՆ

Ստուգել միայն 1691ին է որ, միշտ Ոսկան Արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ, լոյս տեսաւ Քերականութիւն խաչատուր Վարդապետի Առաքելեան Կարենցոյ, տպարանին մէջ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի՝ զօրական Արիկոնեանի մէջ, Քրիստոսի 1691 տարին (հայ րոշական 1140)¹։

Հինգ տարի վերջ, վերոյիշեալ տպագրիչներու մամուլէն ելաւ Գիրք պատմութեան Փոնցիականի և իր կնոջ², և յաջորդ տարին Պատմութիւն դարձի և մկրտութեան Յովնանէս Հայտնութեամբ, ազնուական հրեային, Հրէից Վարդապետին, Գերմանիայէն պատմութիւն յօրինուած իրմէ գերմաներէն լեզուով. խոսքերէն բարգմանութեան վրայէն հայերէն բարգմանուած Յակոբ Զրպետեան Եղեատցի քահանայէն, Լիկուսեանի մէջ

1697ին (Հայկական րոշական 1146)³։

Վերջին գործը որ — ինչքան որ մեզի ծանօթ է⁴ — տպուած է Լիվոնոյ՝ Ս. Էջմիածնի և Ս. Սարգսի տպարանին մէջ՝ կը կոչուի Բաղդիրք Հայոց, յօրինուած Երեմիա քահանայէն, և ևս Սարգիս Եպիսկոպոս աշխատեցայ և միացուցի քառասուն հետ Ս. Գրքի խօսքերը։ Տպուեցաւ Արիկոնեան քաղաքին մէջ Քրիստոսի 1698րոշին, Յունիս (Հայկական րոշական 1147)⁵։

Գարծեալ քահանայ մ'է որ Լիվոնոյի մէջ 1701ին հայ նշանագրերով կը հրատարակէ իր երկասիրած մէկ գիրքը որու անուն է Գործիք չարչարանաց, տպագրեալ յամին 1701 ի Լիվոնեա. Տպարան Աստուծատուրի⁶։

մեկայն հայոց։ Արդ՝ որք հանդիպէր սորա. վայելելով կամ գրօնելով յիշեալիք յաղօրս ձեր զմտականարար գործոյս։ ոյր յիշէր յիշեալ յիշիք ի յոյսոյն մեղմե. ամեն,

Համաձայնութեամբ Տեսան Եփրեմի Արիկոնեանի տպարանի կոստանդինուպոլսոյ։

Հոգաբարձութեամբ, ծախիչը ևս սրբագրութեամբ, նոշատի ունեմն,

Ս. Գ. Ս.

3. Կը ցուցնէր որ սոյն գործը կը պակսի մեր գրատան մէջ, և հետեւաբար չենք կրնար ընթերցողին ներկայացնել զորքին բուն ճակատը։

4. Յօդուածագիրը կ'անդիտանայ 1702ին տպ. Պարզատումար Հռովմեականը։

5. Ահա բնագիրը։

ԲԱՌ ԳԻՐԲ ՀԱՅՈՑ ԱՐԱՐԵԱՆ

Ի Ս. Էջմիածին Երեմիայ վարդապետէ. Եւ ևս Սարգիս Եպիսկոպոս աշխատասիրեալ. Եւ գրառաւ Աստուծաշունչ գրոցն ընդ ամա միաշորեալ. Որ ևս ընթերցողացն Աստուծաշունչ գրոց բաշական է յիով տպագրեցաւ։

Ի Հայրապետութեան Տեսան Կանապետի Կարոնդիկոսի ամենից հայոց։

Ի Յայկոնեայ քաղաքի ևս թվականութեան հայոց ՌձԻԷ. յունիս ժ. ևս ի թվին Փրկչին. 1698. Յունիսի ժ. Գրքին վերջն ալ կը կարդանք. «Շնորհիւն ևս ողորմութեամբն Աստուծոյ. Աշարտեցաւ Բառ գիրքս. րվին հայոց. ՌձԻԷ, ևս Հոկտեմբերի ամսոյ. Ի (20)։ Ի լաւ ևս ընտիր օրինակէ. որ ևս յոյժ օգտակար է ընթերցողացն զաստուծաշունչ ևս զայլ գրեանս. Աշխատասիրութեամբ. Սարգսի Բաճասիրի ևս զոկիսացոյ. որ ևս սանեքձի վերաժայեալ ևս որդեակն իմ Սիմոն» ևն.

6. Գործախառնար սոյն գիրքն ևս կը պակսի մեր գրատան մէջ, որով չենք կրնար հոս զննել ճակատը։

1. Առնեն չունենալով Լիվոնեան տպ.՝ հոս կը գնենք Կ. Պոլսի 1696ի տպագրութիւնը՝ որ յար և նման ըլլալ կը թուի, ինչպէս կը ցուցնէ ամբողջութիւնը՝ բացի թուականէն։

ԳԻՐԲ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԵԱՆ

Եւ շարադրեցաւ ի խաչատուր արքունեացոյ Աստուծաբան Վարդապետէ որդոյ յոշաւորյանիստ արոնոյ Սրբոյ Էջմիածնի. Յաղագս մանկանց, ևս աշոյց, որք տակաւին ոչ են ունեալ զբարեոյ կերպ խօսելոյ, և գրելոյ, և ընթերցելոյ։

Յօրինեալ են տպարանումս սրբոյ Էջմիածնի. և սրբոյ Սարգսի զօրավարի. Ի Հայրապետութեան Տեսան Կանապետի դիտակետի, ևս Կարոնդիկոսի ամենայն հայոց.

Յայկոնեայ քաղաքի։

Ստորեւ Կ. Պոլսի տպագրութեան թուականն էր, ինչպէս կը տեսնուի վերջաբանէն, էջ 124, զոր կը փոխենք. Եւր թուում փրկչին 1691, իսկ հայոց ՌձԻ. վերջին տողը Կ. Պ.ի տպ.եան «Մարտի Գ. հրամանաւ մեծաւորաց»։

2. Բուն ճակատը հետեւեալն է.

ԳԻՐԲ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Կայսերն Փոնցիականի. ևս Կնոջն. ևս որդոյն Գիտկոնիականոսի. ևս

ՅԵՌԵՄԻԱՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ

Տպագրեցեալ են տպարանումս սրբոյ Էջմիածնի, ևս սրբոյն Սարգսի զօրաշարի։

Ի Հայրապետութեան Տեսան Կանապետի ամենից հայոց Կարոնդիկոսի։

Ի Յայկոնեայ քաղաքի թվոյ Փրկչին. 1696. ևս Հայոց 1145. Մայիսի 25.

Իսկ վերջաբանն է (էջ 184). «Աշարտեցաւ գրգռիկ պատմութեան շահաւետ ևս օգտակար ամենայնի ի վայելչումն հանոց արամազեաց եղբարց. յամի ներմարմնութեան Տեսան 1696. ևս Հայոց 1145. Յունիսի 20. Ի հայրապետութեան Տեսան Կանապետի դիտակետի ա-

Եւ յաջորդ տարին ալ լոյս կ'ընծայէ գործը թեօփիրոս, թեօփիրոսի խօսակցութիւնը քահանային հետ՝ ձյնարտութիւն և Աստուծապաշտութիւնը ձանկարու համար. Ի հայրապետութեան Տեսան Մաքսպետի Կարոնդիկոսի ամենայն Հայոց. տպեալ յԱրիկոնեա, յամի Տեսան 1701, Յունեար։

Որքան որ մեզի ծանօթ է՝ ասիկա հա-

յերէն լեզուով վերջին տպագրութիւնն է մեր քաղաքին մէջ։

Ութսունեակ և աւելի տարիներ յետոյ Մարգար Շէհրիման կոմսը Կրանտուքային (մեծ դքսին) կը ներկայացնէր հետեւեալ աղերսագիրը², խնդրելով Լիվոնոյի մէջ հայ տառերով տպարան մը բանեցնելու իրաւունքը։

»Altezza Reale

«Պարսկաստանի Շէհրիման կոմսերէն Մարգար՝ Զեք Ա. Բ. ամենախոնարհ ծառան, ամենախորին յարգանքով Զեզի կը ներկայացնէ թէ ինչպէս տարիներէ ի վեր Լիվոնոյի մէջ բնակութիւն հաստատած ըլլալով՝ արդէն ամէն տեսակ ընտիր հայ տառեր ունի զոր հոգացած է մեծ ծախքով, այդ զրերը կարող են նոյն լեզուով ո՛ր և է տպագրութիւն կատարելու։ Եւ որովհետեւ աղերսարկուն բաց ի իր բնիկ հայ լեզուէն՝ ծանօթ է նաեւ Անգլիերէնի, Գաղղիերէնի, Սլաւոնիերէնի և Իտալիերէնի, փափագելով իր ժամանակը գործածել աւելի ուրիշներու օգտին քան թէ իր անձին, սկսած է հայերէնի թարգմանել յիշեալ լեզուներէն զանազան զրքեր, որոնք իր ազգակիցներուն համար օգտակար պիտի ըլլան տպուելով։

«Սակայն որովհետեւ Ն. Ա. Բ. երջանիկ երկիրներու այնչափ հասարակաց կամ առանձնական ճոխութեանց մէջ, որոնցմով հաճեք ևս զանոնք ճոխացնել, Ողբասարկուն անծանօթ ըլլալով յիշեալ հայ լեզուով տպարանի մը գոյութիւնը, կ'աղերսէ Ն. Ա. Բ. վեհափառ զթութիւնը, որ հաճի աղերսարկուն շնորհել Լիվոնոյի մէջ անձնական ծախքով, վերոյիշեալ հայ

«Marcarà dei Conti Cheriman di Persia umilissimo servo di V. A. R. col più profondo ossequio Le rappresenta, qualmente avendo stabilito in Livorno il suo domicilio da parecchi anni si ritrova fornito d'ogni sorte di ottimi caratteri Armeni provveduti con spese non indifferenti, e capaci di supplire alla stampa di qualunque libro di detto idioma; E siccome l'Oratore possiede oltre il nativo Idioma Armeno l'uso dell'Inglese, Francese, Spagnolo, ed Italiano, desideroso di occupare il tempo più all'atruui che al proprio vantaggio va traducendo in Armeno vari libri di detti Idiomi, che a vantaggio de suoi Nazionali riuscirebbe comodo di consegnare alle stampe.

«Che però nei Felicissimi Stati di V. A. R. fra tanti pubblici, e privati pregi di cui si è degnata arricchirli, mancando a cognizione dell'Oratore una stamperia in detto Idioma Armeno, supplica il med. l'Augusta Clemenza di V. A. R. a degnarsi accordare all'oratore la facoltà di erigere in Livorno a proprie spese la Stamperia suddetta di caratteri

1. Ահա բուն ճակատը. թԵՌԹԻԼՈՍ ԱՅՈՒՆԳԸ ԻՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԹԵՌԹԻԼՈՍԻ ԸՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՂԱԳՍ ՃԵՄԱՐՏՈՒԹԵԱՆ և ՋԵՐՄԵՆՈՒՆԴՈՒԹԵԱՆ.

Ի Հայրապետութեան Տեսան Կանապետի Կարոնդիկոսի ամենից հայոց։

Ի Արիկոնեայ քաղաքի Յամի Տեսան 1701. Յունեարի ի փառս մեծագոյնս Աստուծոյ։

Թիրեա աւելորդ չըլլայ նշանակել թէ զրքն սկիզբը գրուած պատկերը՝ որուն ստորեւ գրուած է Սոքր Գրի. գոր Լոսաւորիլ՝ վրան կը կրէ լատինական տառերով S. Ambrosius, պարզապէս փոխ առնուած պատկեր մը։

2. Վաւերագրին պատմական կարեւորութեան համար հոս թարգմանութեան հետ պատշաճ տեսանք իտալերէն բնագիրն ալ գետեղել։

տառերով տպարան մը հիմնելու իրաւունքը, ըլլայ տպագրելու, ըլլայ նաեւ գրքեր թարգմանելու, որպէս զի զիրին ըլլայ հրատարակելը:

Աղերսարկուն պատկանելով ընտանիքի մը որ երախտագիտութեամբ կը յիշէ Ն. Ա. Բ. վեհափառ նախնիքներէն և մասնաւորապէս բարեյիշատակ Լէոնովտ Կայսրէն ասոր 23 Յունիս 1699ի հրովարտակով փառաւորուած և Հունգարիոյ Աւագ ընտանիքներու կարգին դասուած ըլլալը, կը յուսայ Ն. Ա. Բ. գթութենէն վեհապետական առատաձեռնութեան այս նոր ցոյցը, զոր խոնարհութեամբ կը հայցէ:

ՄԱՐԿԱՐ ՇԵՆՔԻՄԱՆ¹

Պետական ատենադպիրը աղերսագիրը կը փոխանցէր Լիվոռնոյի Կառավարիչ Սեւրաթի Զօրավարին որ պէսզի այդ նիւթին շուրջ իր կարծիքն յայտնէր. և սա քննելով Շէնքիման հայուն խնդիրը կը պատասխանէր նամակով հետեւեալ զոր կ'ախոր-

Ա. Տէր քարտուղար Ռիկուչիոյ Կալուչցի:

«Անցեալին մէջ Ելեւստից Նախագահութենէն 4 հոկտ. 1752 նամակով հրաման մը տրուած էր՝ համեմատ կառավարական խորհուրդի որոշումներուն, որ թոյլ չըտրուէր Լիվոռնոյի մէջ առանց յիշեալ խորհուրդի թոյլտուութեան՝ եղածներուն վրայ նոր տպարաններու բացումը:

Սակայն նոյն նիւթին նկատմամբ եղած զանազան աղերսագրներու ստիժով՝ այս Կառավարութեան 31 Օգոստ. 1767 նամակով նկատուեցաւ, որ չէր գիտցուեր թէ ինչ շարժառիթի վրայ հիմնուած էր վերոյիշեալ սեղմումը, թէ այդ հակառակ էր ընդհանուր ազատութեան որ կը թոյլատրէր ճարտարարուեստը և հակառակ էր ազատ նաւահանգստի առանձնաշնորհումներուն, որոնց մէջ է այն՝ թէ թոյլ տրուած է ամենուն

1. Քաղաքային պատմական դիւան.— Քաղաքական նամականի.— տարի 1789. ծրար թիւ 38.

Armeni tanto per la stampa quanto per la traduzione in detto Idioma dei libri, che possa tornar comodo di pubblicare.

«L'Oratore appartenendo ad una Famiglia che riconosce dagli Augustissimi Antenati di V. A. R., e fra essi singolarmente dall'Imperatore Leopoldo di Gloriosa memoria l'essere stata con suo Diploma del 23 giugno 1699 illustrata ed ascritta fra le Magnatizie Famiglie d'Ungheria, spera dalla Clemenza di V. A. R. questo nuovo tratto di Sovrana Munificenza, che implora umilmente.»

Marcarà Cheriman².

Ժիմ հոս ներկայացնել, մանաւորապէս անոր համար որ հոն լուսարանուած են ժամանակին տպագրութեան շուրջ քանի մը զաղափարներ, զորս ճանչնալը անօգուտ պիտի չըլլայ:

«Al Sig. Segretario Riguccio Galluzzi

«Vi era in passato un ordine dato con Lettera della Presidenza delle Finanze tel 4 ottobre 1752 coerentemente alle determinazioni del Consiglio di Reggenza, che non si permettesse di aprire in Livorno altre Stamperie oltre quelle che allora esistevano senza Licenza di detto Consiglio.

«Ma all'occasione di diverse suppliche state fatte in tal proposito fu osservato con Lettera di questo Governo de 31 agosto 1767, che non si sapeva sopra qual motivo fosse fondata La predetta restrizione, che Ella era contraria alla Libertà Generale, che voleva Lasciarsi all'Industria e repugnante a' privilegi di questo Porto franco, fra quali vi è

2. Archivio Storico Cittadino: Lettere civili dell'anno 1789, filza n. 38.

ազատութիւն ո՛ր և իցէ արուեստ կամ գործ մը բանեցնել ըստ կամս. և առջարկուեցաւ որ լիովին ազատ թողուի նաեւ Տպագրութեան արուեստն ալ, միայն պահելով 1743ի Օրէնքին պարունակած հրահանգները. և Տէր Կոմս Ռոզնպերկի 8 Սեպտ. 1767ի նամակով յայտարարուեցաւ որ Ն. Ա. Բ. բաւ կը կենար 8 Հոկտ. 1752ի հրահանգներէն և կը շնորհէր Լիվոռնոյի մէջ տպագրելու ազատութիւնը, ով որ ուզէր և ի կարողութեան ըլլար պարապելու այդպիսի արուեստով, ամէն լեզուով և տառերով այն գրքերը և երկերը որոնք պիտի վաւերացուին բարի Կառավարութեան նախազգուշութիւններով:

Պէտք չունի ուրեմն Շէնքիման յատուկ շնորհի մը՝ հաստատելու հայ գրքերու համար ծրագրուած տպարանը. և ես պարտք համարեցի ծանուցանել իրեն թէ այս յօդուածին շնորհիւ լիովին ազատութեան մէջ է, միայն պարտականութեամբ պահելու Տպագրութեան վրայ հսկող Օրէնքներն և հրամանները:

Այսչափ պարտք կը համարիմ ի պատասխան Ձեր Մեծարգութեան 4 ընթացիկին որուն հետ ինծի զրկեցիք վերոյիշեալ կոմս Շէնքիմանի աղերսագիրը: Ձերդ Գերապատուութեան եմ:

Անձնուէր և պատրաստակամ ծառայ
Զօր. Ֆրանչեսքո Սերատի¹

Թէպէտ, ինչպէս տեսնեմ, թոյլ տրուեցաւ Շէնքիմանի Լիվոռնոյի մէջ իր հայ տպարանը գործածելու իրաւասութիւնը, անկարելի եղաւ սակայն գտնել իր մասին ուրիշ ծանօթութիւններ կամ նոյն իսկ իր անունը կրող հայ հրատարակութիւն մը: Ասոնք են Լիվոռնոյի հայ տպագրութեան շուրջ հակիրճ և ցանցառ ծանօթութիւնները զորս կը ցանց հաւաքել:

Ի վերջոյ կ'ուզենք անդրադարձնել հա-

quello che sia Lecito ad ognuno esercitare Liberamente qualunque Arte o Mestiere, le piaccia, e fu proposto che si lasciasse in piena libertà anche quello della Stampa osservati solo gl'ordini contenuti nella Legge del 1743, e con Lettera del Sig. Conte di Rosenberg degl'8 7mbre 1767 fu dichiarato che S. A. R. recedeva dagli ordini del 4 8bre 1752, ed accordava la Libertà di Stampare in Livorno a chi volesse, e fosse in grado di accudire ad una tal Professione in ogni Lingua e Carattere que' libri, e Composizioni, che saranno approvate con le cautele del buon Governo.

«Non ha bisogno adunque lo Cheriman di una Grazia Speciale p. stabilire la progettata Stamperia di libri Armeni, ed io ho dovuto dichiarargli che resta su questo articolo in una piena Libertà, col solo obbligo di osservare le Leggi, ed ordini veglianti in materia di Stampa.

«Tanto devo in replica alla stimatissima di V. Illustrissima de 4 stante con cui mi accompagnò la Supplica del predetto Conte Cheriman. E sono di V. E.

«Dev.mo Obb.mo Serv.re
«Gen. Francesco Seratti»¹.

մակրանքով թէ ինչպէս հայ եկեղեցւոյ քահանաները, Արքեպիսկոպոսներ, Եպիսկոպոսներ, և խոնարհ զինուորեալներ՝ ոգեւորուած հաւատքով և միակամ ձուլուած, տպագրողներ հանդիսացան, աշխարհիս մէջ տարածելու համար Քրիստոնեայ Գաղափարականը, քաղաքակրթութեան այդ մեծ և յառաջամարտիկ միջոցով որ է և պիտի մնայ միշտ գերբը:

ԿՈՒՆՏՈՑ ՔԻՍՏՓՈՒՆԻ

1. Քաղաքային պատմական դիւան.— պատճէն քաղաքական նամականւոյ. ծրար թիւ 20. էջ 152. r.
2. Այս ծանօթութիւնները ինչ ինչ փոփոխութիւններով

քաղեցի իմ «Լիվոռնոյի տպագրական արուեստը» գրքոյկէն՝ զոր ողբացեալ տպագրիչ Յունիոս Պէլֆորթէ յայտնի մեկնաստութեամբ տարիներ առաջ իր ծախքով տպեց:» եւն.